Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 36-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը

2023 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքում նոր ծրագրերի իրականացման նախաձեռնությամբ և առաջացած խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Ջրահովիտ բնակավայրի Վլադիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում նախադպրոցական կրթության միկրոծրագրի իրականացման համար անհրաժեշտ է համայնքային ներդրում 2 710,5 հազար դրամի չափով:

Քաղաքի կենտրոնական փողոցներում երթևեկությունը բեռնաթափելու և առավել անվտանգ դարձնելու համար անհրաժեշտ է Հերացի փողոցի շարունակությունը՝ դեպի «Արմեն Նազարյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ տանող ճանապարհային հատվածի, «Մորենա» ռեստորանային համալիրից մինչև Նոր թաղամաս 12 շենքի դիմաց դուրս եկող ճանապարհային հատվածի ասֆալտապատման և մայթի կառուցման համար պատվիրել նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթ և փորձաքննության եզրակացություն ընդհանուր 990,0 հազար դրամ գումարով:

2023 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտները կապիտալ սուբվենցիաների մասով անհրաժեշտ է ավելացնել 217 578,6 հազար դրամով: Համաձայն ՀՀ կառավարության 23.02.2023թ. թիվ 237-Ն որոշման՝ Մասիս համայնքում իրականացված ծախսային ծրագրերով գնման պայմանագրերի շրջանակներում մարզպետարան ներկայացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա հատկացվել է կապիտալ սուբվենցիա հետևյալ աշխատանքների համար՝

- Մասիս համայնքի Մասիս քաղաքում մանկապարտեզի կառուցում /թիվ 3 մանկապարտեզ/
- Մասիս համայնքի Այնթապ և Ջորակ բնակավայրերի փողոցների նորոգում՝ ասֆալտապատմամբ

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Մուտքեր
				Եկամուտներ				
1				Կապիտալ սուբվենցիաներ				217 578,6
				Ծախսեր				
2	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Վարչական սարքավորումներ	5122		-990,0	
3	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.**Մասիս համայնքի Այնթապ և Ջորակ բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ/սուբվենցիա/	5113		79 324,6	
4				Հերացի փողոցի շարունակությունը դեպի «Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ տանող ճանապարհային հատվածի, «Մորենա» ռեստորանային համալիրից մինչև Նոր թաղամաս 12 շենքի դիմացի հատվածի նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		900,0	
5				փորձաքննություն	5134		90,0	
6	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Թիվ 3 մ/պ ՀՈԱԿ-ի կառուցում /սուբվենցիա/	5112		138 254,0	
7	09	2	2	**Միջնակարգ կրթություն.**Ջրահովիտ բնակավայրի Վլ. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ին նախադպրոցական կրթության միկրոծրագրի իրականացման համար ընթացիկ դրամաշնորհ	4637	2 710,5		
8				Նվիրատվություններ	4819	-2 710,5		
				Ընդամենը		*0,00*	*217 578,6*	*217 578,6*

2023 թվականի բյուջեի փոփոխությունների արդյունքում ֆոնդային մասի եկամուտները և ծախսերը կավելանան 217 578 600 դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ